

գիտութիւնները, որոնք մայր յղացք մը լաստակերտեցին, առանց մտահոգուելու, թէ ո՛ր իրականութեանց կրնար վերածուիլ անիկա: Ու սխալի մէջ չեմ, եթէ երբեք յայտարարեմ, թէ մեր պատրանքին չափ - այդ յղացքներուն տարողութեանը վրայ - ինչպէս մեր ռոմանթիզմը, ես կ'աւելցնեմ մեր անգիտութիւնը թշնամիին հոգեբանութենէն: Մենք կը փոխուէինք շատ արագ: Թուրքը իր հոգեկան խորագոյն գիտակցութեան նոր կը դառնար, ժողովուրդ մը ըլլալու համար, ան՝ որ դարերով աշխարհակալ էր եղած, այսինքն՝ բանակի սպաս: Թուրքերը որդեգրելով Արեւմուտքի արտաքին երեսը, Համիտի ռեժիմին յայտարարեցին իրենց համար հոգի մը, որ 7-8րդ դարերու իսլամինն էր, ուր ներարկուէին ցեղամիջեան ալ ատելութեանց բոլոր ահաւոր թոյները: Այս վերլուծումը գիտ հեռուները կը տանի հիմա: Ստիպուած կը կենամ:

Ապահով եմ, որ ոչ մէկ յեղափոխական ճամբայ ինկած կ'ըլլար դէպի հայրենիք, ոչ թէ վախէն իր անձին, զոր յօժարած էր գոհաբերել, այլ՝ սարսուռակին այն հեռանկարին մղձաւանջովը տապալած, եթէ երբեք թուրքը ըլլար ճանչցած մեզի պէս, այսինքն՝ իբր զգայնութիւն, միտի, ոսկորի փորձառութիւն, հոգիին բունին տրուած եսթաղան ու մեղքին թեւերուն օղակուած կախաղան: Թուրքը այդ մէկ հատիկ բառն է, որուն մէջ կը խտանան մեր պապերուն ամէնէն եղերական ապրումները: Այն սողաքը, մերիններէն, որ ելան թուրքին դէմ, ըրին ատիկա, իրենց հաշուոյն, մեռնելու հաստատ վճիռով, երբեք չանդրադառնալով հաւաքական դատին վրայ այդ ելոյթին ունենալիք չարագուշակ հետեւանքներուն: Արեւմտահայը տուած է հայ յեղափոխութեան միաստիքները: Ատիկա տակաւ կը դառնայ պարզ, երբ երեւան կը հանլին գործիչներու յուշերը: Արեւելահայերը, որոնք մահակառոյց այդ զգացումը մտածեցին շահագործել աւելի ընդարձակ, համապարփակ ազգային նպատակներու սպասին, հաւատարիմ էին իրենց ուրիշ կարգէ զգայ-